առ թագաւորն, որ Մանգու խանն»[217], *վերջին հատուածում. «եւ միոյ մանկանն իմոյ Իվանի Աթաբակին պարգեւէ՛ զքո զառատ ողորմութիւնդ եւ զամենայն թշնամիս, որ ընկրկեալ սատակէ՛ եւ յամաւթ արա՛»*[218]:

Սակայն Կոչիկ անապատում՝ երեք կից միանաւ եկեղեցիներից համեմատաբար մեծի (հարաւայինի) մուտքի առջեւ, արեւմուտքից կցուած սրահի մէջ ունենք մի մեծ, տափակ գերեզմանաքար, որի վրայ կայ հետեւեալ ուշագրաւ 7 տողանոց տապանագիրը. «Այս է հան/գիստ իշխա/ն Խերխանին, / որդոյ *Հասանին,* / թոռին Բա/ղաց թագաւորին: / *Թվին :ՉԼԵ:* [=1286 թ.]»[219]: *Բնագրի այս՝ «Թոռին Բաղաց թագաւորին» իւրայատուկ նշման շնորհիւ դժուար է չնկատել, որ խօսքը կարող է վերաբերել միայն Հասան Ջալալի «միոյ մանկանը»: Դա աւելի յստակ երեւում է նոյն եկեղեցու բեմի ճակատի ծաւալուն արձանագրութիւնից: Գրականութեան մէջ այդ վիմագիրը լաւ յայտնի է, բայց հիմնականում՝ շնորհիւ բնագրում յիշուած Մամիկոնեան իշխանների, որոնց անունները նշուած են նաեւ Զիկագոյի ծաղկազարդ Աւետարանի (1237 թ.) հետագայի յիշատակարանում*[220] *(Մաշտոցի անուան Մատենադարանում, բարեբախտաբար, կայ ձեռագրի մանրաժապաւէնը*[221]*): Վերջինիս՝ ներկայումս գրեթէ լրիւ մաշուած բոլորագրից (թ. 2բ)*[222] *ԺԹ. դարի հապշտապ շղագրով 19 տողով արտագրուած (թ. 3ա) եւ դժուար ընթեռնելի, բայց ուշադիր վերլուծելու դէպքում՝ ամբողջովին վերականգնուող բնագիրն է.*

*«Յուս{ովն Ա*ստուծո*ն՝* (10-12 տառ) *...ս,՞} / ու Մարծպանս, Մամիկոնս ընկ/ալաք Շիկալքարայ Ա*ստուա*ծածինս, / որ էս որ առաջ եւ էլ մէզ ում*[՞] *յարկ/ից զէս եկեղեցիս ընդ խալանի / են արարել, արդ, մէք զէս խոստացաք / ու զՇիկալքարայ Ա*ստուա*ծածինն* ետ *իւր / ամ*ենայն *հողովն Թերխան արարաք. եւ տվ{ին մե՞}/զ սպասավորք եկեղեցոյս Դ աւր ժամ զ{ատկ՞}/ին, Ա աւրն՝ հաւր մերոյ Հասանայ եւ {Ա՞} / աւրն՝ եղբաւր մերոյ Սեւադէի եւ / Բ աւրն՝ մաւր մերոյ Մամխաթու{նին՞}: / Արդ, թէ յիմոց կամ յաւտարաց / կամ ելազգե[ա]ց զէս գիրս խափանել / ջանայ ու զէս եկեղեցիս էլ ընդ հարկիւ / անել ջանա[յ]՝ մեր ազգի ու տակի մեղաց / տէր եղէցի, մասն եւ բաժին ընդուն/եսցի եւ ընդ Արիոսիցն առցէ. / գրեցաւ գիրս ի թվ{...* (6-8 տառ)*}»: Բարեբախտաբար, թ. 15բ-ում նոյն բոլորագրով երկրորդ յիշատակարանի աւարտը չի կորցրել թուականի նշումը. «...եւ Ա*ստուա*ծ զձեր / մեղս թողու իւր միւս անկամ գա-*

217 Տե՛ս Ձեռ. ՄՄ թիւ 378, թ. 8բ-9ա; **И. Орбели**, *hАсан Джалал, князь Хаченский*, էջ 155-156; *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 311: Ժամանակի նշումն է. «ի թիւն Հայոց ՉԺ *[=1261 թ.]* տուի զսուրբ Աւետարանս ծաղկազարդ, յիշատակ աստուածասէր տիկնոջն {Մամքանայ} ի մեր Լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից, ի հոգեւոր տէրն Ներսէս...» (թ. 9ա):

218 ՄՄ ձեռ. թիւ 378, թ. 9ա: Իւանէին յիշատակող վիմագրերից տե՛ս, օր., *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 50, N 122, էջ 116, N 387, էջ 50, N 122 (վերեւում, ծնթ. 142, 177, 188): Մոնղոլ փոխարքայ Սարթախի մօտ Հասան Ջալալի գլխաւորութեամբ 1250 թ. մեկնած խմբի մասին տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. ԾԵ, էջ 359 (վերեւում, ծնթ. 54, 190):

219 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 29 (N 59): «Թոռն Բաղաց թագաւորին» արտայայտութեան մասին տե՛ս վերեւում, ծնթ. 107, 208, հմմտ. ծնթ. 101:

220 Տե՛ս **Յ. Քիւրտեան**, *Զիքակոյի համալսարանին հայերէն ձեռագիրները*, - «Սիոն», 1971, թիւ 7-8, էջ 273-274; **F. Sanjian**, *A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States*, Los-Angeles-London, 1976, էջ 234; *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 905:

221 ՄՄ դրսի մանրաժապաւէններ, թիւ 612:

222 Իհարկէ, հրաշալի կը լինէր, եթէ մօտ ապագայում փորձ կատարուէր դա (այդպէս եւ թ. 4բ-ի նոյնանման բոլորագրի հետքերը) ընթերցելու ճառագայթային յատուկ եղանակով: